ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2022 թվականի N 61-Հ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով, 25-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 308-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հավելվածի 2-րդ մասի 4-րդ կետի 4-րդ սյունյակի «5-րդ» բառը փոխարինել «6-րդ» բառով,

2) որոշման հավելվածի 2-րդ մասի 8-րդ կետի 4-րդ սյունյակի «8-րդ» բառը փոխարինել «2-րդ» բառով,

3) որոշման հավելվածի 2-րդ մասի 15-րդ կետի 2-րդ սյունյակի «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» բառերը փոխարինել «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» բառերով, իսկ 4-րդ սյունյակի «2-րդ» բառը՝ «8-րդ» բառով,

4) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերը:

2. Որոշման հավելվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-32-րդ կետերով.

«

22	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Անտառօգտագործման գործընթաց	4-րդ վարչություն

23	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրեր	5-րդ վարչություն
24	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում	5-րդ վարչություն
25	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային և վարկային ծրագրեր	5-րդ վարչություն
26	ՀՀ առողջապահության նախարարություն	Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	7-րդ վարչություն
27	ՀՀ առողջապահության նախարարություն	Սոցիալապես անապահով և առանձին անձանց խմբերի բժշկական օգնություն	7-րդ վարչություն
28	ՀՀ առողջապահության նախարարություն	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	7-րդ վարչություն
29	ՀՀ առողջապահության նախարարություն	Մոր և մանկան առողջության պահպանում	7-րդ վարչություն
30	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Պետական բյուջեի մուտքերի ձևավորման կանոնակարգված գործունեություն	8-րդ վարչություն
31	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում	8-րդ վարչություն
32	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Սպառազինության և ռազմական տեխնիկայի /ՍՌՏ/ ձեռքբերում, ինչպես նաև դրանց առանձին հանգույցների և սարքավորումների ձեռքբերման,	10-րդ վարչություն

		արդիականացման, վերականգնման, նոր նմուշների մշակման և արտադրությանն ուղղված գործունեություն	

»:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա. ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆ